ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող NISSAN X-TERRA 3.3 մակնիշի թեթև մարդատար տրանսպորտային միջոցը (նույնականացման համարը՝ 5N1ED28Y43C635401, հաշվառման համարանիշը՝ 777 AO 61) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող NEW HOLLAND B80B մակնիշի էքսկավատորը (նույնականացման համարը՝ NKJB80BEJMKH24862, պետական համարանիշը՝ 4432LL) անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը: